

3102

ՊԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ

21

ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ՃԱՌԸ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ԿՐԵՄԼՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆԸ

1938 թ. մայիսի 17-ին

3K 33

C-47

ՊԵՏԶՐԱՏ ● ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ ● 1938 ՅԵՐԵՎԱՆ



Հայերեն թարգմանությունը
խմբագրեց Բ. Ն. Դավթյան
Սրբագրե՛չ Հ. Մանվելյան
Կոնտրոլ սրբագրե՛չ Լ. Արավյան

Գլավխիտի լիազոր № Գ-3289, հրատ. № 584

Պատվեր № 105, տիրաժ 15.000

Հանձնվել է արտադրության 7/VI 1938 թ.

Ստորագրված է տպագրության 14/VI 1938 թ.

Գինը 15 Կ.

Պետհրատ—Քաղաքական գրականության հրատարակչության
տպարան, Յերևան, Ալավերդյան № 65

Ընկերներ:

Թույլ տվեք առաջարկել գիտություն կենսացը, նրա ծաղկման կենսացը, գիտություն մարդկանց կենսացը:

Գիտության ծաղկման կենսացը, այն գիտության, վորը չի պարսպվում ժողովրդից, իրեն հեռու չի պահում ժողովրդից, այլ պարաստ է ծառայելու ժողովրդին, պատրաստ է ժողովրդին հաղորդելու գիտության բոլոր նվաճումները, վորն սպասարկում է ժողովրդին վոչ թե հարկադրաբար, այլ կամավոր կերպով, հաճույքով: (Ծափահարուք յո՞ւնենեք):

Գիտության ծաղկման կենսացը, այն գիտության, վորն իր հին ու ճանաչված դեկավարներին թույլ չի տալիս ինքնագոհ կերպով պարփակվել գիտության քուրմերի կեղևի մեջ, գիտության մոնոպոլիստների կեղևի մեջ, վորը հասկանում է գիտության յերիտասարդ աշխատողների հետ գիտության հին աշխատողների դաշինքի իմաստը, նշանակությունը, ամենագորությունը, վորը գիտության բոլոր դոճները կամավոր կերպով ու հաճույքով բաց է անում մեր յերկրի յերիտասարդ ուժերի առաջ և նրանց հնարավորություն է տալիս նվաճելու գիտության բարձունքները, վորն ընդունում է, վոր սպազան պատկանում է գիտու-

թյան յերիտասարդությանը: (Ծափահարություններ):

Գիտության ծաղկման կենացը, այն գիտության, վորի մարդիկ, հասկանալով գիտության մեջ հաստատված տրադիցիաների ուժն ու նշանակությունը և դրանք հմտորեն ոգտագործելով ի շահ գիտության, այնուամենայնիվ չեն ուզում լինել այդ տրադիցիաների ստրուկները, վորն ունի հին տրադիցիաները, նորմաները, դիրքավորումները փչրելու համարձակություն, շնորհակալություն, յերբ դրանք դառնում են հնացած, յերբ դրանք արգելակի յեն վերածվում առաջխաղացման համար, և վորը կարողանում է ստեղծել նոր տրադիցիաներ, նոր նորմաներ, նոր դիրքավորումներ: (Ծափահարություններ):

Գիտությունն իր զարգացման մեջ ճանաչում է վոչ պակաս քաջարի մարդիկ, վորոնք կարողանում էյին փչրել հինը և ստեղծել նորը, չնայած ամեն տեսակ խոչընդոտներին, հակառակ ամեն բանի: Գիտության այնպիսի քաջարիներ, ինչպես Գալիլեյը, Դարվինը և շատ ուրիշները, հանրաժանութ են: Յես կուզեյի կանգ առնել գիտության այդպիսի կորիֆեյներից մեկի վրա, վորը միևնույն ժամանակ հանդիսանում է մեր ժամանակի մեծագույն մարդը: Յես նկատի ունեմ Լենինին, մեր ուսուցչին, մեր դաստիարակին: (Ծափահարություններ): Հիշեցեք 1917 թիվը: Ռուսաստանի հասարակական զարգացման գիտական

անալիզի հիման վրա, միջազգային դրության գիտական անալիզի հիման վրա Լենինն այն ժամանակ յեկավ այն յեզրակացության, վոր դրությունից միակ յեկքը հանդիսանում է սոցիալիզմի հաղթանակը Ռուսաստանում: Այդ ավելի քան անսպասելի յեզրակացություն էր այն ժամանակվա գիտության շատ մարդկանց համար: Պլեխանովը, գիտության աչքի ընկնող մարդկանցից մեկը, այն ժամանակ արհամարհանքով էր խոսում Լենինի մասին՝ պնդելով, թե Լենինը գտնվում է «զառանցանքի մեջ»: Գիտության այլ, վոչ պակաս հայտնի մարդիկ պնդում էյին, թե «Լենինը խելագարվել է», թե նրան հարկավոր է թազցնել վորեէ հեռու տեղ: Այն ժամանակ Լենինի դեմ վոռնում էյին գիտության բոլոր ու ամեն տեսակ մարդիկ, վորպես մի մարդու, վորը քանդում է գիտությունը: Բայց Լենինը չվախեցավ հոսանքին դեմ գնալուց, քարացածությանը դեմ գնալուց: Յեկ Լենինը հաղթեց: (Ծափահարություններ):

Ահա ձեզ գիտության քաջարի տիպարը, վոր համարձակորեն պայքար է մղում հնացած գիտության դեմ և ճանապարհ է հարթում նոր գիտության համար:

Այնպես էլ լինում, վոր գիտության ու տեսնիկայի նոր ուղիներ յերբեմն հարթում են գիտության մեջ վոչ հանրաժանութ մարդիկ, այլ գիտական աշխարհում միանգամայն անհայտ մարդիկ, հասարակ մարդիկ, պրակտիկները,

գործի նորարարները: Այստեղ ընդհանուր սե-
զանի շուրջը նստած են ընկերները Ստախանովը
և Պապանինը: Մարդիկ, վորոնք գիտական աշ-
խարհում անհայտ են, վորոնք չունեն գիտա-
կան աստիճաններ, իրենց գործի պրակտիկ-
ներն են: Բայց ո՞ւմ հայտնի չե, վոր
Ստախանովն ու ստախանովականներն ար-
դյունաբերության ասպարիզում իրենց գործ-
նական աշխատանքում դեն չպրտեցին,
վորպես հնացած, գոյություն ունեցող
այն նորմաները, վորոնք սահմանվել եյին գի-
տության ու տեխնիկայի հայտնի մարդկանց
կողմից, և մտցրին նոր նորմաներ, վորոնք հա-
մապատասխանում են իսկական գիտության ու
տեխնիկայի պահանջներին: Ո՞ւմ հայտնի
չե, վոր Պապանինն ու պապանինականե-
րը դրեյֆոդ սառցադաշտի վրա կատարած
իրենց գործնական աշխատանքով անցողա-
կիորեն, առանց հատուկ դժվարության, դեն
չպրտեցին Արկտիկայի մասին յեղած հին պատ-
կերացումը վորպես հնացած և սահմանեցին
նորը, վորը համապատասխանում է իսկական
գիտության պահանջներին: Ո՞վ կարող է ժըխ-
տել, վոր Ստախանովը և Պապանինը նորարար-
ներ են գիտության մեջ, մեր առաջավոր գի-
տության մարդիկն են:

Ահա թե ել ինչպիսի «հրաշքներ» են լինում
գիտության մեջ:

Յես խոսեցի գիտության մասին: Բայց լի-
նում է ամեն տեսակ գիտություն: Այն գիտու-

թյունը, վորի մասին յես խոսեցի, կոչվում է
Ա.Ռ.Ս.ՋԱՎՈՐ գիտություն:

Մեր առաջավոր գիտության ծաղկման կե-
նացր:

Առաջավոր գիտության մարդկանց կե-
նացր:

Լենինի՛ և լենինիզմի՛ կենացր:

Ստախանովի՛ և ստախանովականների՛ կե-
նացր:

Պապանինի՛ և պապանինականների՛ կենա-
ցր: (Ծափահարալթյուններ):



ԳԻՆԸ 5 Կ.

332

**РЕЧЬ ТОВА. СТАЛИНА
НА ПРИЕМЕ В КРЕМЛЕ
РАБОТНИКОВ ВЫСШЕЙ ШКОЛЫ**

17 мая 1938 г.

Аригиз—Издательство полит.
литературы, Ереван